ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՄԱԱՊՁԲ-21-8-2»

ք. Երևան «11» 05. 2021թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Ս. Սահակյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԷՅ ԴԱԲԼՅՈՒ ԱՅ ԳՐՈՒՊ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Բ. Կիրկորյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին՝ կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.1.9 Ապրանքների ընդունման գործընթացն իրականացնել ՀՀ պաշտպանության նախարարի 22.02.2019թ. N 177 հրամանի պահանջների համաձայն (հրամանը հրապարակված է http://mil.am կայքի «Գրադարան» բաժնի «ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐ» ենթաբաժնում):

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 7,540,000 (յոթ միլիոն հինգ հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո 15 բանկային օրվա ընթացքում, համապատասխան եռամսյակներում առկա միջոցների հաշվին, բայց ոչ ուշ, քան 10.12.2021թ.:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պարանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանքը մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[2] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով

---

[2] *Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի

էլեկտրոնային փոստին: 8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է __11__ **էջից**, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ Գործերի կառավարչությունը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 02522157
ՀՀ պաշտպանության նախարարի
տեղակալ

ՎԱՃԱՌՈՂ

«ԷՅ ԴԱԲԼՅՈՒ ԱՅ ԳՐՈՒՊ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Ագաթանգեղոսի 2.
« Արցախբանկ» ՓԲԸ
Հ/Հ 223070302110
ՀՎՀՀ 02703531
տնօրեն

Բ. ԿԻՐԿՈՐՅԱՆ

Հավելված N 1
«ՄԱԱՊՁԲ-21-8-2»
ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

հ/հ	ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ	ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ
1	Խորհրդանշական նվերներ /Ձեռքի ժամացույց «AWI» ՀՀ ԶՈՒ զինանշանով (հրամանատարական)/	Ժամացույցի իրանը տիտանից է, տրամաչափը՝ 43-ից 48մմ, բարձրությունը՝ 10-ից 15մմ, մեխանիզմը՝ ճապոնական ինքնալար, նաև պտուտակի միջոցով լարելու հնարավորությամբ, ապակին՝ բնական շափյուղա (սապֆիր): Ետնամասը ապակուց է, որտեղից տեսանելի է ժամացույցի մեխանիզմը: Թվատախտակի կենտրոնում գունավոր պատկերված է ՀՀ զինված ուժերի զինանշանը: Զինանշանի վերևամասում՝ սպիտակ ֆոնի վրա, կապույտ տառերով հայերեն գրված է «ՀԱՅԱՍՏԱՆ», իսկ ներքևում՝ կիսաշրջանին համապատասխան կապույտ գույնով «ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐ» բառերը: Թվատախտակի ծախ կողմում գտնվում է օրացույցի վահանակը: Ժամացույցի դարձերեսին անգլերեն, տպատառ տառերով դաջված են արտադրող երկրի, ընկերության և տվյալ ժամացույցի տեսակի վերաբերյալ տվյալներ: Ջրակայունությունը՝ 10 մթն. (100 մետր): Գոտին պատրաստված է սև գույն ունեցող ռետինից, որը ամրանում է մետաղական ճարմանդի միջոցով: Գոտու ճարմանդով հատվածի երկարությունը 80-ից 100 մմ է, գոտու մյուս հատվածի երկարությունը՝ 105-ից 125 մմ: Ժամացույցի գոտին ունի 2 ռետինե ժապավեն՝ կոճկված գոտու շարունակությունը տեղադրելու համար: Ժապավենների լայնությունը՝ 3-ից 8մմ: Ժամացույցի տուփը պատրաստված է պլաստիկե նյութից և պատված է սև գույն ունեցող արհեստական կաշվով: Տուփի դիմերեսին անգլերեն տառերով գրված են «AWI INTERNATIONAL» բառերը: Տուփի չափսերն են՝ բարձրությունը՝ 80-ից 100 մմ, լայնությունը և երկարությունը՝ 100-ից 120 մմ: Տուփի ներսում գտնվում է ժամացույցը տեղադրելու համար նախատեսված համապատասխան ուղղանկյուն խոռոչ: Խոռոչի մեջ տեղադրված է արհեստական կաշվով պատված բարձիկ կամ ճկվող ժապավեն, որի վրա ամրացված է ժամացույցը:
2	Խորհրդանշական նվերներ/Ձեռքի ժամացույց «AWI» («ՀՀ պաշտպանության նախարարից» մակագրությամբ՝ սպայական)/	Ժամացույցի իրանը չժանգոտվող պողպատից է, ունի քառանկյան ձև, երկարությունը և լայնությունը՝ 30-ից 40 մմ, բարձրությունը՝ 7-ից 11 մմ, մեխանիզմը՝ ճապոնական քվարցային, էլեկտրոմեխանիկական, ապակին՝ բնական շափյուղա (սապֆիր): Ժամացույցի իրանի կողային աջ հատվածում գրված են «ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՑ» բառերը: Ժամացույցի դարձերեսին անգլերեն, տպատառ տառերով դաջված են արտադրող երկրի, ընկերության և տվյալ ժամացույցի տեսակի վերաբերյալ տվյալներ: Ջրակայունությունը՝ 5 մթն. (50 մետր): Գոտին պատրաստված է սև կամ դարչնագույն գույն ունեցող բնական կաշվից, որը ամրանում է մետաղական ճարմանդի միջոցով: Գոտու ճարմանդով հատվածի երկարությունը 80-ից 100 մմ է, գոտու մյուս հատվածի երկարությունը՝ 115-ից 125 մմ: Ժամացույցի գոտին ունի 2 կաշվե ժապավեն՝ կոճկված գոտու շարունակությունը տեղադրելու համար: Ժապավենների լայնությունը՝ 3-ից 7մմ: Ժամացույցի տուփը պատրաստված է պլաստիկե նյութից և պատված է սև գույն ունեցող արհեստական կաշվով: Տուփի դիմերեսին անգլերեն տառերով գրված են «AWI INTERNATIONAL» բառերը: Տուփի չափսերն են՝ բարձրությունը՝ 80-ից 100 մմ, լայնությունը և երկարությունը՝ 100-ից 120 մմ: Տուփի ներսում գտնվում է ժամացույցը տեղադրելու համար նախատեսված համապատասխան ուղղանկյուն խոռոչ: Խոռոչի մեջ տեղադրված է արհեստական կաշվով պատված բարձիկ կամ ճկվող ժապավեն, որի վրա ամրացված է ժամացույցը:
3	Խորհրդանշական նվերներ/Ձեռքի ժամացույց «AWI» («ՀՀ պաշտպանության նախարարից» մակագրությամբ՝ կանացի)/	Ժամացույցի իրանը չժանգոտվող պողպատից է, ունի ուղանկյուն ձև, երկարությունը՝ 30-ից 45 մմ, լայնությունը՝ 22-ից 28 մմ, բարձրությունը՝ 7-ից 11 մմ, մեխանիզմը՝ ճապոնական քվարցային, էլեկտրոմեխանիկական, ապակին՝ բնական շափյուղա (սապֆիր): Ժամացույցի իրանի կողային աջ հատվածում գրված են «ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՑ» բառերը: Ժամացույցի դարձերեսին անգլերեն, տպատառ տառերով դաջված են արտադրող երկրի, ընկերության և տվյալ ժամացույցի տեսակի վերաբերյալ տվյալներ: Ջրակայունությունը՝ 3 մթն. (30 մետր): Գոտին պատրաստված է կաշվից և ամրանում է մետաղական ճարմանդի միջոցով: Գոտու ճարմանդով հատվածի երկարությունը 80-ից 90 մմ է, գոտու մյուս հատվածի երկարությունը՝ 105-ից 115 մմ: Ժամացույցի գոտին ունի 2 կաշվե ժապավեն՝ կոճկված գոտու շարունակությունը տեղադրելու համար: Ժապավենների լայնությունը՝ 3-ից 7 մմ: Ժամացույցի տուփը պատրաստված է պլաստիկե նյութից և պատված է սև գույն ունեցող արհեստական կաշվով: Տուփի դիմերեսին անգլերեն տառերով գրված են «AWI INTERNATIONAL» բառերը: Տուփի չափսերն են՝ բարձրությունը՝ 80-ից 100 մմ, լայնությունը և երկարությունը՝ 100-ից 120 մմ: Տուփի ներսում գտնվում է ժամացույցը տեղադրելու համար նախատեսված համապատասխան ուղղանկյուն խոռոչ: Խոռոչի մեջ տեղադրված է արհեստական կաշվով պատված բարձիկ կամ ճկվող ժապավեն, որի վրա ամրացված է ժամացույցը:

4	Խորհրդանշական նվերներ/Ձեռքի ժամացույց «AWI» ՀՀ ԶՈՒ զինանշանով (սպայական)/	Ժամացույցի իրանը չժանգոտվող պողպատից է, տրամաչափը՝ 40-ից 50 մմ, բարձրությունը՝ 7-ից 12 մմ, մեխանիզմը՝ ճապոնական քվարցե, էլեկտրամեխանիկական, ապակին՝ բնական շափյուղա (սապֆիր): Ժամացույցի կենտրոնում, սպիտակ թվատախտակի վրա գունավոր պատկերված է ՀՀ ԶՈՒ զինանշանը, որից ներքև գրված են «ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՏ» բառերը: Թվատախտակի ձախ հատվածում գտնվում է օրացույցի վահանակը: Թվատախտակի վրա գտնվող թվերը հռոմեական են: Ժամացույցի դարձերեսին անգլերեն, տպատառ տառերով դաջված են արտադրող երկրի, ընկերության և տվյալ ժամացույցի տեսակի վերաբերյալ տվյալներ: Ջրակայունությունը՝ 5 մթն. (50 մետր): Գոտին պատրաստված է սև գույն ունեցող ռետինից, որը ամրանում է մետաղական ճարմանդի միջոցով: Գոտու ճարմանդով հատվածի երկարությունը 80-ից 90 մմ է, գոտու մյուս հատվածի երկարությունը՝ 115-ից 125մմ: Ժամացույցի գոտին ունի 2 ռետինե ժապավեն՝ կոճկված գոտու շարունակությունը տեղադրելու համար: Ժապավենների լայնությունը՝ 6-ից 9մմ: Ժամացույցի տուփը պատրաստված է պլաստիկե նյութից և պատված է սև գույն ունեցող արհեստական կաշվով: Տուփի դիմերեսին անգլերեն տառերով գրված են «AWI INTERNATIONAL» բառերը: Տուփի չափսերն են՝ բարձրությունը՝ 80-ից 100մմ, լայնությունը և երկարությունը՝ 100-ից 120մմ: Տուփի ներսում գտնվում է ժամացույցը տեղադրելու համար նախատեսված համապատասխան ուղղանկյուն խոռոչ: Խոռոչի մեջ տեղադրված է արհեստական կաշվով պատված բարձիկ կամ ճկվող ժապավեն, որի վրա ամրացված է ժամացույցը:
5	Խորհրդանշական նվերներ/ Ձեռքի ժամացույց «AWI» ՀՀ ԶՈՒ զինանշանով (զինվորական) /	Ժամացույցի տրամաչափը՝ 40-ից 45 մմ, հաստությունը՝ 7-ից 11 մմ՝ մեխանիզմը՝ էլեկտրամեխանիկական, գոտին պատրաստված է մուգ կանաչ կամ սև գույն ունեցող կոշտ գործվածքից, որն ամրանում է մետաղական ճարմանդի միջոցով: Գոտու ճարմանդով հատվածի երկարությունը 80-ից 95 մմ է, գոտու մյուս հատվածի երկարությունը՝ 110-ից 120 մմ: Գոտու եզրերը կարված են սև կամ կանաչ թելերով: Ժամացույցի գոտին ունի նաև համապատասխան կտորից ժապավեն՝ կոճկված գոտու շարունակությունը տեղադրելու համար: Ժապավենի լայնությունը՝ 15-ից 25 մմ: Ժամացույցի թվատախտակի կենտրոնում պատկերված է ՀՀ ԶՈՒ զինանշանը: Զինանշանի վերին եզրում սպիտակ ֆոնի վրա կապույտ տառերով կորաձև գրված են «ՀԱՅԱՍՏԱՆ», իսկ ներքևում՝ «ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐ» բառերը: Ժամացույցի ետնամասը փակ է, որի վրա անգլերեն, տպատառ տառերով դաջված են արտադրող երկրի, ընկերության և տվյալ ժամացույցի տեսակի վերաբերյալ տվյալներ: Ժամացույցը տեղադրված է ուղղանկյունաձև սև ստվարաթղթե տուփի մեջ: Տուփը երկկողմանի շարժական հնարավորություն ունի: Ներսում դրված է ժամացույցի ձևին համապատասխան սև սպունգանման կաղապար: Ժամացույցի տուփի վրա՝ ձախ կողմում դաջված է «AWI INTERNATIONAL» լոգոտիպը, իսկ աջ կողմում՝ ՀՀ ԶՈՒ զինանշանը՝ տրամաչափը՝ 35-45 մմ:
6	Խորհրդանշական նվերներ/Ձեռքի ժամացույց բարձրաստիճան սպայական/	Ժամացույցի իրանը չժանգոտվող պողպատից է, տրամաչափը՝ 40-ից 45 մմ, հաստությունը՝ 11-ից 14 մմ, մեխանիզմը՝ ճապոնական ինքնալար, նաև պտուտակի միջոցով լարելու հնարավորությամբ, ապակին՝ բնական շափյուղա (սապֆիր), դարձերեսը՝ թափանցիկ: Թվատախտակի ձախ հատվածում գտնվում է օրացույցի վահանակը: Ջրակայունությունը՝ 5 մթն. (50 մետր): Գոտին պատրաստված է սև կամ դարչնագույն գույն ունեցող բնական կաշվից, որը ամրանում է մետաղական ճարմանդի միջոցով: Գոտու ճարմանդով հատվածի երկարությունը 80-ից 100 մմ է, գոտու մյուս հատվածի երկարությունը՝ 105-ից 125 մմ: Ժամացույցի գոտին ունի 2 կաշվե ժապավեն՝ կոճկված գոտու շարունակությունը տեղադրելու համար: Ժապավենների լայնությունը՝ 3-ից 8մմ: Ժամացույցի տուփը պատրաստված է պլաստիկե նյութից և պատված է սև գույն ունեցող արհեստական կաշվով: Տուփի դիմերեսին անգլերեն տառերով գրված են «AWI INTERNATIONAL» բառերը: Տուփի չափսերն են՝ բարձրությունը՝ 80-ից 100 մմ, լայնությունը և երկարությունը՝ 100-ից 120 մմ: Տուփի ներսում գտնվում է ժամացույցը տեղադրելու համար նախատեսված համապատասխան ուղղանկյուն խոռոչ: Խոռոչի մեջ տեղադրված է արհեստական կաշվով պատված բարձիկ կամ ճկվող ժապավեն, որի վրա ամրացված է ժամացույցը:
7	Խորհրդանշական նվերներ/ Ձեռքի ժամացույց սպայական/	Ժամացույցի իրանը չժանգոտվող պողպատից է, տրամաչափը՝ 35-ից 39մմ, հաստությունը՝ 5-ից 8 մմ, մեխանիզմը՝ ճապոնական քվարցե, էլեկտրոմեխանիկական: Ժամացույցի դարձերեսին գրված են «ՀՀ ԶՈՒ ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻ ՊԵՏԻՑ» բառերը: Ջրակայունությունը՝ 5 մթն. (50 մետր): Գոտին պատրաստված է սև կամ դարչնագույն գույն ունեցող բնական կաշվից, որը ամրանում է մետաղական ճարմանդի միջոցով: Գոտու ճարմանդով հատվածի երկարությունը 80-ից 100 մմ է, գոտու մյուս հատվածի երկարությունը՝ 105-ից 125 մմ: Ժամացույցի գոտին ունի 2 կաշվե ժապավեն՝ կոճկված գոտու շարունակությունը տեղադրելու համար: Ժապավենների լայնությունը՝ 3-ից 8մմ: Ժամացույցի տուփը պատրաստված է պլաստիկե նյութից և պատված է սև գույն ունեցող արհեստական կաշվով: Տուփի դիմերեսին անգլերեն տառերով գրված են «AWI INTERNATIONAL» բառերը: Տուփի չափսերն են՝ բարձրությունը՝ 80-ից 100 մմ, լայնությունը և երկարությունը՝ 100-ից 120 մմ: Տուփի ներսում գտնվում է ժամացույցը տեղադրելու համար նախատեսված համապատասխան ուղղանկյուն խոռոչ: Խոռոչի մեջ տեղադրված է արհեստական կաշվով պատված բարձիկ կամ ճկվող ժապավեն, որի վրա ամրացված է ժամացույցը:

8	Խորհրդանշական նվերներ/ ՀՀ ԶՈՒ ԳՇ զինանշանով ձեռքի ժամացույց/	Ժամացույցի տրամաչափը՝ 40-ից 45 մմ, հաստությունը՝ 7-ից 11 մմ՝ մեխանիզմը՝ էլեկտրամեխանիկական, գոտին պատրաստված է մուգ կանաչ կամ սև գույն ունեցող կոշտ գործվածքից, որն ամրանում է մետաղական ճարմանդի միջոցով: Գոտու ճարմանդով հատվածի երկարությունը 80-ից 95 մմ է, գոտու մյուս հատվածի երկարությունը՝ 110-ից 120 մմ: Գոտու եզրերը կարված են սև կամ կանաչ թելերով: Ժամացույցի գոտին ունի նաև համապատասխան կտորից ժապավեն՝ կոճկված գոտու շարունակությունը տեղադրելու համար: Ժապավենի լայնությունը՝ 15-ից 25 մմ: Ժամացույցի թվատախտակի կենտրոնում պատկերված է ՀՀ ԶՈՒ ԳՇ զինանշանը: Ժամացույցը տեղադրված է ուղղանկյունաձև սև ստվարաթղթե տուփի մեջ: Տուփը երկկողմանի շարժական հնարավորություն ունի: Ներսում դրված է ժամացույցի ձևին համապատասխան սև սպունգանման կաղապար: Ժամացույցի տուփի վրա դաջված է «AWI INTERNATIONAL» լոգոտիպը:

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

հ/հ	Գնման առարկա	Չ/մ	Քանակը	Միավորի գինը (ՀՀ դրամ)	Ընդհանուր գումարը (ՀՀդրամ)	մատակարարումը 2021թ., ընդ որում՝ մինչև 31.05.2021թ.
1	Խորհրդանշական նվերներ /Ձեռքի ժամացույց «AWI» ՀՀ ԶՈՒ զինանշանով (հրամանատարական)/	հատ	10	75,000	750,000	10
2	Խորհրդանշական նվերներ/Ձեռքի ժամացույց «AWI» («ՀՀ պաշտպանության նախարարից» մակագրությամբ՝ սպայական)/	հատ	20	30,000	600,000	20
3	Խորհրդանշական նվերներ/Ձեռքի ժամացույց «AWI» («ՀՀ պաշտպանության նախարարից» մակագրությամբ՝ կանացի)/	հատ	10	25,000	250,000	10
4	Խորհրդանշական նվերներ/Ձեռքի ժամացույց «AWI» ՀՀ ԶՈՒ զինանշանով (սպայական)/	հատ	40	15,000	600,000	40
5	Խորհրդանշական նվերներ/ Ձեռքի ժամացույց «AWI» ՀՀ ԶՈՒ զինանշանով (զինվորական)/	հատ	300	8,000	2,400,000	300
6	Խորհրդանշական նվերներ/Ձեռքի ժամացույց բարձրաստիճան սպայական/	հատ	20	50,000	1,000,000	20
7	Խորհրդանշական նվերներ/ Ձեռքի ժամացույց սպայական/	հատ	70	22,000	1,540,000	70
8	Խորհրդանշական նվերներ/ ՀՀ ԶՈՒ ԳՇ զինանշանով ձեռքի ժամացույց/	հատ	50	8,000	400,000	50

Ծանոթություն.

- Ապրանքատեսակները պետք է լինեն նոր և չօգտագործված:

Մատակարարման վայրը ք. Երևան, Բագրևանդի 5 մատակարար կազմակերպության միջոցով:

- Նշված ապրանքները չեն հանդիսանում հիմնական միջոցներ:
- Նշված ապրանքների համար համապատասխանության սերտիֆիկատ կամ երաշխիքային նամակ չի պահանջվում:
- Մատակարարումը հնարավոր է իրականացնել փուլային եղանակով:

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարության
ՀՀ պաշտպանության նախարարության
տեղապահ

ՎԱՃԱՌՈՂ

«ԷՅ ԴԱԲԼՅՈՒ ԱՅ ԳՐՈՒՊ» ՓԲԸ
տնօրեն

Ս.Ա. ԿԻՐԿՈՐՅԱՆ

Հավելված N 2
«ՄԱԱՊՁԲ-21-8-2»
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Գնման առարկայի					
հ/հ	**անվանումը**	**CPV կոդը**	**Նախատեսվում է ֆինանսավորել 2021թ. ըստ եռամսյակների, բայց ոչ ուշ, քան 10.12.2021թ., ընդ որում՝**		
			II եռամսյակ	III եռամսյակ	IV եռամսյակ
1.	Խորհրդանշական նվերներ /Ձեռքի ժամացույց «AWI» ՀՀ ԶՈՒ զինանշանով (հրամանատարական)/	39281200/6	0	750,000	750,000
2.	Խորհրդանշական նվերներ/Ձեռքի ժամացույց «AWI» («ՀՀ պաշտպանության նախարարից» մակագրությամբ՝ սպայական)/	39281200/7	0	600,000	600,000
3.	Խորհրդանշական նվերներ/Ձեռքի ժամացույց «AWI» («ՀՀ պաշտպանության նախարարից» մակագրությամբ՝ կանացի)/	39281200/8	0	250,000	250,000
4.	Խորհրդանշական նվերներ/Ձեռքի ժամացույց «AWI» ՀՀ ԶՈՒ զինանշանով (սպայական)/	39281200/9	0	600,000	600,000
5.	Խորհրդանշական նվերներ/ Ձեռքի ժամացույց «AWI» ՀՀ ԶՈՒ զինանշանով (զինվորական)/	39281200/10	0	2,400,000	2,400,000
6.	Խորհրդանշական նվերներ/Ձեռքի ժամացույց բարձրաստիճան սպայական/	39281200/11	0	1,000,000	1,000,000
7.	Խորհրդանշական նվերներ/ Ձեռքի ժամացույց սպայական/	39281200/12	0	1,540,000	1,540,000
8.	Խորհրդանշական նվերներ/ ՀՀ ԶՈՒ ԳՇ զինանշանով ձեռքի ժամացույց/	39281200/13	0	400,000	400,000

Նշանություն.
- Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

ԳՆՈՐԴ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի
տեղակալ

ՎԱՃԱՌՈՂ
«ԷՅ ԴԱԲԼՅՈՒ ԱՅ ԳՐՈՒՊ» ՓԲԸ
տնօրեն

Բ. ԿԻՐԿՈՐՅԱՆ

Հավելված N 3
«ՄԱԱՊՁԲ-21-8-2»
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____ __	_____
_____ __	_____
գտնվելու վայրը _____ __	գտնվելու վայրը _____
հհ _____ __	հհ_____
հվհհ _____ __	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
«ՄԱԱՊՁԲ-21-8-2»
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N __
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն